

10.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
PHILOLOGY
ФИЛОЛОГИЧЕСКИЕ НАУКИ

ԲԱՅԱԾԱՆՑՆԵՐԸ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Վ. Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների բեկմաժու, դոցենտ,
ԳՊՀ պրոֆեսոր

Բայազետի բարբառում և ածանցավոր բայեր կազմվում են բաղադրական-քերականական և քերականական բայածանցներով։ Բարբառումն բաղադրական-քերականական ածանցներն են **Ա**, **Է** և **ԱԱ**։ Սրանցից **Ա** ածանցը համապատասխանում է հայերենի այլ դրսևորումների և **Ա**, **Է** աա ածանցներին։ Փաստորեն, եթե գրական հայերենում հինհայերենյան **ան** բայածանցի դիմաց է խոնարհման բայերում առկա է **Ա** ածանց (գտանել - գտնել, ելանել - ելնել, իջանել - իջնել), իսկ **Ա** խոնարհման բայերում՝ **ան** ածանց (իմանալ, գողանալ, մեծանալ), ապա Բայազետի բարբառում **Ա**, **Ե**, **Ա** խոնարհումների բայերում հինհայերենյան **ան** ածանցի դիմաց (ինչպես նաև սեփական կազմություններում) ունենք **Ա** ածանց, ինչպես՝ գ'ըթնել, մըդնել, հիշնել, պըօթնել, գ'օղնալ, յեռվընալ, ջօչնալ, խասկընալ և այլն¹։ Գրական հայերենում **Ա** և **ան** ածանց ունեցող բայերը հանդես են քերում բայակիմքերի կազմության տարբերություններ (գտնելու, հասկանալ - հասկաց), իսկ Բայազետի բարբառում նաև տարբերություններ **Ա** ածանց ունեցող բայերի մեջ դրսևորվում են արդեն ըստ խոնարհումների։ Բարբառումն ածանց ունեցող մի շարք բայերը փոխառություններ են գրական լեզվից, ինչպես՝ դ'իմանալ, զարմանալ, վիզանալ, վեռչանալ, զարքանալ, նեղանալ, խօստանալ, իընգերանալ, թառթառանալ, վերանալ և այլն։ Ավելի սակավ են **Է** ածանց ունեցող բայերը։ Կ Ա մէնալ, վախէնալ, ունէնալ։ Բայազետի բարբառում չ բայածանց գոյություն չունի, դրա դիմաց ունենք կամ **Ա**, կամ ոչինչ։ Վախչել - վախնել, թռչել - թռնել, կպչել - կըբնել/կըպել, դիպչել - դիբել, հալչել - խալել, հանգչել - հանքել, կորչել - կորել, ուրչել - ուրել։ Բաղադրական-քերականական ածանցներից Բայազետի բարբառում գործում է Ա խոնարհման բայեր ծևավորող ն-ն, օրինակ՝ բօյօվնալ, ուժօվնալ, ոխսկօվնալ, թիթիզնալ, կամ լրջնալ,

¹ Լանջադրյութի խոսվածքում է խոնարհման բայերի ներկայի հիմքում և **Ա** բայածանցը չի արտահայտվում (հիշել, խաքել, գրթել, մըտել, իընգել, կըլել, պըօթել)։ Երևույթը մասամբ առկա է նաև Սարուխանի խոսվածքում (մըտել, իընգել, պըթել)։ Սակայն անցյալի հիմքում և նրանից կազմված ծևերում այդ բայերը իրենց դրսևորում են **Ա** ածանց ունեցողների օրինակով։

խօրոդնալ, գ'էշընալ, կօլօդնալ, չաղընալ, թըռփօշնալ, վիրեվնալ, իշընալ, վըռազնալ, բ'էտընալ, պըստըզնալ, թափօվնալ, նօթնալ, թիթավնալ, թիձընալ, դուխօվնալ, դոդընալ, թ անմբըլնալ, թ անոընալ, թափօվնալ, լախընալ, խամօվնալ և այլն:

Քերականական ածանցները բարբառներում ևս դրսնորվում են երեք տեսակ-ներով՝ բազմապատկական, կրավորական և պատճառական: Բայազետի բարբառում ամենատարածված բազմապատկական ածանցն է **ոսու**, որով ձևավորվում են հիմնականում Ե խոնարհման բայեր. անմբըռտել, բ'օռթըռտել, թափըռտել, ժըխշըռտել, ժողըռտել, լոխպըռտել, խափըռտել, ծանկըռտել, կապըռտել, հավըռտել, ծրդըռտել, պըջկըռտել, սրխմըռտել, սըռփըռտել, փըռըռտել, փոնթըռտել, փագըռտել և այլն: Այս ածանցով կան նաև Ա խոնարհման բայեր. բըկըռտալ, դըխկըռտալ, զընգըռտալ, լընգըռտալ, հիշկըռտալ, շըփըռտալ և այլն: Բազմապատկական մյուս ածանցները պակաս գործածական են. **կըսու** - խօրմըռկըռտալ, ծընծըխկըռտալ, ծըգըռկըռտալ, օրծըկըռտալ. **ոս** - կըտըռտել, թօփըռտալ, ծըմըռտել, մըզմըստալ, սընդըխտել, պանդըռտել. **ոթ** - ճանգըռթել, ճենջըռթալ. **կ** - ծէսկել, մըքըլկել. **պըսու** - դ'օխսպըռտալ, խօսպըռտալ. **ոկ** - բ'էտըռոկել. **ոծ** - կօղըռծել. **դ** - մըթընտել. **լ** - թօնըլել. **շու** - թօնմըշտել: Բազմապատկականության որոշ իմաստով սաստկականություն է արտահայտում բաղադրական **վոր** ածանցը, ինչպես՝ անզօվորել, մըռթըշվորել, նիյաթվորել, գըլթըգվորել, դըլուվորել, խընթըռվորել, ծանդըռվորել, կըրագվորել, ջիգրավորել, սիրակըստըգվորել և այլն: Այս բառերը առանց բայական վերջավորության հանդես չեն գալիս, այսինքն՝ սրանք ածականներից ձևավորված բայեր չեն, և **վոր** ածանցն էլ, այդպիսով, սրանցում ոչ թե ածականակերտ, այլ բայական ածանց է: Այդ ածանցի սաստկական իմաստը շատ լավ երևում է **խընթըրել** - խընթըրվորել հակադրության մեջ. Երկրորդ բայը նշանակում է «շատ, երկար խնդրել»:

Ինչպես հայերենում ընդիհանրապես, այնպես էլ Բայազետի բարբառում շատ տարածված է բազմապատկականության գաղափարի արտահայտումը նաև բայարմատի կրկնությամբ, օրինակ՝ բօռբըռալ, բ'ընբ'ընալ, բօգբըզել, խեվխըվալ, գըմփգըմփալ, գըրգըռալ, դ'օղլ'դալ, դըռթըռալ, զըմփգըմփալ, թըֆթըֆալ, թըսթըսալ, լըփլըփալ, ծընծընալ, ծըվծըվալ, կըրկըռալ, կըմկըժալ, կըրկըռալ, ծ'էնծ'ընել, ծըփիդըփալ, մըռնըռալ, նընընվալ, շըփշըփալ և այլն:

Կրավորական **կ** ածանցը կարող է դրվել Ե խոնարհման ներգործական սեռի բայերի ներկայի հիմքի վրա (կըրվել, տըփվել, պըռտըվել, կըդրըվել, կիսվել, բ'աժվել, կանչըզվել, օլըրվել, տանջըվել), Ա խոնարհման բայերի անցյալի հիմքի վրա (խասկըցվել, հիմասվել, զգասվել, լըվասվել, կանչըրսավել), Երբեմն նաև՝ ներկայի հիմքի վրա (լըսալ - լըսվել, խօսալ - խօսվել): Բայազետի բարբառում կրավորական **կ** ածանցը առավելաբար ներգործական սեռի բայերը վերածում է չեզոք սեռի, այդ պատճառով էլ ներգործական շատ բայեր, որոնց ցույց տված գործողությունը անհամատեղելի է չեզոքությանը, այդ ածանցը կամ ընդիհանրապես չեն ընդունում, կամ էլ հազվադեպ են ընդունում: Նման բայերից են. անոնել, բուռմել, գան մել, գ'օղնալ, գիղալ, դըմսըկել, զաֆթել, թեփնել, թօղել, ժընջըլել, ժողըռտել, խավնել, բէգրել, տալ, տէնալ, խաքնել, խափըռտել, խելքել-խըրատել, խօվնել, խօրել-թաղել, ծանծըլել, կամենալ, կանալ, կանդալել, կըմնըթել, կըլչել, կընըշտել, կըտըցել, կօնդըխել, հիշկալ, հիստըկշ'ըրել, ճանմփել,

նալ, մայթել, մանգրղել, մայտել, նըխշել, չափունել, չպահպանել, չըլքըլել, չընթել, չըվնել, պայոզաջ'ըրել, պեղել, պըշկըռտել, ջ'ըրտըրել, ջ'օգ'ջ'ըկել, ջ'օկըռտել, սայլել, սըխկել, սընդըխտել, սըռնել, սըռփըռտել, վըլկել, տընդըղել, փագել-փագըռտել, փըռըռտել, փիղել, փինել, քանդըրել, քաշըռոնել, քըրել և այլն: Ի տարբերություն այս կարգի բայերի՝ կան բայեր էլ, որոնցում կ-ն ունի բաղադրական արժեք, այսինքն՝ բայն առանց այդ Վ տարրի գոյություն չունի: Նման բայերից են. բանօօժվել, գ'էրի գ'ըրվել, թերափօխավել, լըքվել, ճըրըվվել, մէգնըվել, նեխնըխֆել, քանըխսվել, թօսըվել, լըօվել, կըսվել, պայպընձվել, ջ'ըրփօխավել, օհիփըշվել և այլն: Որոշ դեպքերում էլ Վ ածանցի հավելումը փոխում է ոչ միայն բայի սեռը, այլ նաև բառային իմաստը, օրինակ՝ բ'ըռթել (բրդել) - բ'ըռթըվել (անեծք է), գ'ընդել (գունդ սարքել) - գ'ընդըվել (անշարժանալ, անդամալույժ դառնալ), թալնել (թալանել) - թալնըվել (ստիպված բոլոր միջոցները ծախսել), թախտըփել (թափ տալ) - թախտըփվել (խստ նիհարել), խըթել (մտցնել) - խըթվել (խրվել և չկարողանալ պոկ գալ), ծակըռտել (ծակըռկել) - ծակըռտըվել (մարմնի որևէ մասում ծակոցներ զգալ), կըսկել (կծկել) - կըսկըվել (կուչ գալ), վէոցել (վերցնել) - վէոցըվել (կատաղել), ծ'ըկտել (ծգտել) - ծ'ըկտըվել (մարմնով ծգվել՝ մի բանի հասմելու), մաշել (մաշել) - մաշշվել (միհիարել), շուլըլել (խոշոր-խոշոր կարել) - շուլըլվել (պատուհաս դառնալ, կպչել), ջ'օկել (ջոկել) - ջ'օգվել (առանձնանալ, տարբերվել), նեղել (նեղություն պատճառել) - նեղվել (նեղսրտել), բ'ըռնել (բռնել) - բ'ըռվել (բանտարկվել), խառնել - խառվել (միջամտել, մասնակից դառնալ), քաշել - քաշվել (ամաշել), կըտըռտել (կտրտել) - կըտըռտըվել (չարչարվել) և այլն:

Բայազետի բարբառում պատճառական ածանցն է **ց՛ն**, որն ավելանում է պարզ և բաղադրական-քերականական ածանց ունեցող բայերի բացարձակ հիմքի վրա. դ'օղալ - դ'օխսընել, խօսալ - խօսցընել, յեռալ - յեռցընել, խաղալ - խախընել, լըսալ - լըսըցընել, քէլալ - քէլցընել, արածալ - արասցընել, էրէվալ - էրէվընել, մըռնըռալ - մըռնըռցընել, անձել - անցընել, բ'ըռնել - բ'ըռնըցընել, բայրիշել - բայրիշցընել, խատել - խատըցընել, բըժըժել - բըժըժցընել, կայկըղել - կայկըղցընել, սիֆտըկել-սիֆտըկցընել, կուրել - կուրցընել, ուրել - ուրցընել, լէննալ - լէնցընել, հերկոնալ - հերկոնցընել, կանոճնալ - կանոճոցընել, մօտկընալ - մօտկըցընել, սեվնալ - սեվցընել, անչընալ - անչըցընել, վախէնալ - վախծընել, խաքնել - խաքցընել, թըռնել - թըռցընել, հիշնել - հիշցընել, մըդնել - մըտցընել, փախնել - փախծընել, խասնել - խասցընել և այլն: Սակավ դեպքերում պատճառական ածանցը փոխում է բայի բառային իմաստը, օրինակ՝ բ'ըռնել (բռնել) - բ'ըռնըցընել (բռնել հանցանքի վրա), լըսալ (լսել) - լըսըցընել (ակնարկներով մի բան հասկացնել), ծայխկել (ծաղկել) - ծախսկըցընել (ծոխացնել, ճողոնցնել) և այլն: Բազմապատկանա (այդ բվում նաև՝ **վոր**) ածանց ունեցող բայերը հազվադեպ պատճառական ածանց ստանում են, ինչպես՝ մըզմըստալ - մըզմըստցընել, ծ'ընձըխկըտալ - ծ'ընձըխկըտցընել, աղօզվորել - աղօզվորցընել, դըլըլվորել - դըլըլվորցընել: Բաղադրական Վ ածանց ունեցող բայերը ևս հազվադեպ են ստանում պատճառական ածանց՝ պահպանելով կամ կորցնելով այդ Վ -ն. գըժվել - գըժվցընել, պայխկըվել - պայխկըվցընել, քանըխսվել - քամբըխցընել: Բարբառումս կան նաև բայեր, որոնցում պատճառական ածանցը բաղադրական է, օրինակ՝ կըլցընել, թալցընել, շըվըցընել, տըխկըցը-

նել, ճեռօքցընել:

Սակավ դեպքերում պատճառական ածանցը չեղոք բայց ներգործականի չի վերածում, օրինակ՝ դ’օխծընել, խըռցընել, չըփչըփընել, փընչընել, բըլբըլցընել:

VERBAL SUFFIXES IN THE DIALECT OF BAYAZET

V. L. Katvalyan

In the dialect of Bayazet, there are the following verbal suffixes: the compounding suffixes **ան**, **էն**, **ն**, frequentative suffixes **ռստ**, **կրտ**, **տ**, **ռթ**, **կ**, **պըտ**, **ռկ**, **ռժ**, **դ**, **լ**, **շտ**, **վոր**, the passive voice forming suffix **վ**, and causative suffix **ցն**. The verbs with suffix **ան** are very rare, and they are borrowed from the literary language. In the rest of the cases, before the suffix **ան** stands “n”. The compounding suffix **վոր** has both the frequentative and emphatic meanings. As a rule, verbs of neuter voice are formed from verbs of active voice by the help of the passive voice forming suffix **վ**. But in most of the cases, verbs of active voice cannot get the suffix **վ**. Sometimes, the suffixes **վ** and **ցն** change not only the grammatical, but also the lexical meanings of the word.

ГЛАГОЛЬНЫЕ СУФФИКСЫ В БАЯЗЕТСКОМ ДИАЛЕКТЕ

В. Л. Катвальян

В баязетском диалекте выступают компонентные суффиксы **ան**, **էն**, **ն**, умножительные - **ռստ**, **կրտ**, **տ**, **ռթ**, **կ**, **պըտ**, **ռկ**, **ռժ**, **դ**, **լ**, **շտ**, **վոր**, возвратный суффикс **վ** и причинный суффикс **ցն**. Немногочисленны глаголы с суффиксом **ան**, являющиеся заимствованиями из литературного языка, в остальных случаях наблюдается наличие перед суффиксом **ան** суффикса **ն**: Компонентный суффикс **վոր** имеет значение и множественности, и усиленности. Как правило, возвратный суффикс **վ** превращает глаголы действительного залога в глаголы средневозвратного залога, но во многих случаях глаголы действительного залога не могут получать суффикс **վ**. Иногда суффиксы **վ** и **ցն** изменяют не только грамматическое, но и лексическое значение слова.